



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2023

ՏԵՐՈՒՍԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 46

ԱՄԵՆԱԿԱԼ ԱՍՏՈՒԱԾԸ ՄԵՋԻ ՀԵՏ Է

Աստուած է մեր ապաւենն ու գօրութիւնը,
 նեղութեանց մէջ շուրով հասնող օգնականը:
 Հերեւաբար մենք չենք վախնար, նոյնիսկ եթէ աշխարհը սարսի,
 եւ լեռները իյնան ծովերուն խորը:
 Նոյնիսկ եթէ ալիքները շառաչեն եւ փրփրին,
 եւ լեռները դողան անոնց կարադութենէն:
 Գեպ մը կայ, որ իր վրակներով կ'ուրախացնէ Աստուծոյ քաղաքը,
 Բարձրեալին սուրբ բնակարանը:
 Աստուած ինք այդ քաղաքին մէջ է, ուստի անիկա անսասան է,
 որովհետեւ Աստուած կ'օգնէ անոր՝ ամէն օր:
 Ինչքան ալ ազգերը խռովքի մարնուին,
 թագաւորութիւնները սասանին,
 բայց երբ Աստուած որոպայ՝ աշխարհին ամբողջ կը հալի:
 Ամենակալ Տէրը մեզի հեպ է.
 մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է:
 Եկէք, տեսէք Տիրոջ գործերը,
 զարմանահրաշ գործերը՝ որ ան կ'ընէ երկրի վրայ:
 Աշխարհի չորս անկիւններուն՝ պարտերազմները կը դադարեցնէ,
 աղէտները կը կտրտէ, նիզակները կը փշրէ, եւ վահանները կրակով կ'այրէ:
 «Դադարեցուցէ ձեր կռիւները,
 եւ ճանչցէք թէ ես եմ Աստուածը,
 ես է որ կ'իշխեմ ազգերուն, ես կը փրկեմ աշխարհին»:
 Ամենակալ Տէրը մեզի հեպ է.
 մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է:

ՇՐՄԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
*աջ թո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ թո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*



ԱՄԵՆԱԿԱԼ ԱՍՏՈՒԿԾԸ ՄԵԶԻ ՀԵՏ Է

Հերաբրբրական որ այս Սաղմոսի սկիզբին կը նշուի, որ ասիկա երգ է, եւ ընդհանրապէս երգերը փարբեր փեսակի բնոյթ կրնան ունենալ, փխրութեան եւ կամ ուրախութեան առիթով: Այս պարագային ուրախութեան առիթով երգուած երգ: Անոր համար ալ կ'արժէ նկատի ունենալ այս Սաղմոսի ժամանակահատուածը, թէ երբ եւ ինչ շիթի երգուած երգ է: Պարմականօրէն ցոյց կու տայ, որ այս Սաղմոսը երգուած է երբ Ուխտի Տապանակը եր վերադարձած է գերութենէն: Ուխտ Տապանակը Աստուծոյ ներկայութիւնը խորհրդանշող այն առարկան է, որով Իսրայէլի ժողովուրդը ապահովութիւնը կ'ունենար որ Աստուծոյ ներկայութիւնը իրենց մէջ է: Ամէն անգամ երբ Ուխտի Տապանակը գերի կը փարուէր, կը նշանակէ Աստուծոյ ներկայութենէն կը զրկուէին:

Այս Սաղմոսը նաեւ այն վստահութեան երգն է, որ Աստուած է միակ ու ճշմարիտ ապաւենն ու գործութիւնը: Մանաւանդ՝ նեղութեան մէջ շուրջով օգնութեան հասնողը: Ընդհանրապէս մարդը երբ Աստուած չունի իր կեանքին մէջ, անպայմանօրէն բանի մը կ'ապաւինի, բանի մը վրայ կը դնէ իր յոյսը: Իսկ երբ նեղութեան եւ դժուարութեան մէջ առաւել եւս: Օրինակ, կը վստահինք եւ կ'ապաւինինք մեր դրամին, մեր գիտութեան, մեր համբաւին, մեր վկայականին, իսկ իբրեւ ժողովուրդ, մեզէ աւելի զօրաւոր պետութիւններուն, մոռնալով, սակայն, որ այս բոլորը ժամանակաւոր են, փակաւին չըսելու համար խափուսիկ:

Ինչպիսի նեղութեան ժամանակ է, որ շուրջով օգնութեան կը հասնի Աստուած: 2-3 համարները կը ներկայացնեն բնութեան աղէտի պարագային: Գիտէք, նախ, կայ այն փառաբանութիւնը որ եթէ Աստուած մեզի հետ է, ուրեմն մեր նեղութիւն չենք ունենար, ու պէտք չէ ունենանք: Ընդհակառակը, նեղութեան եւ դժուարութեան մէջ մեր կողքին ըլլալու խոստումը փութեր է մեզի: Այդ նեղութեան եւ դժուարութեան մէջ Իրեն ապաւինելու ու ապահովութիւնը ունենալու, երբեք իրար չանցնելու, ընդհակառակը ներքին խաղաղութիւնը ունենալու եւ երբեք չվախնալու, նոյնիսկ մահուան շուքին ձորին մէջէն ալ պարզինք: Այսօր ալ այդպիսի վիճակներու մէջէն կ'անցնինք, բնութեան աղէտ, երկրաշարժեր, պիքներու շառաչիւն, եւ երբ այս բոլորը միեւնոյն ժամանակ փեղի ունենան, անպայմանօրէն մարդ արարած կոչուածը իրար կ'անցնի, եւ այդ իրար անցումին մէջ դժուար թէ կ'ողմնորոշուի ինչ ընէ, բայց երբ Աստուծոյ է որ վստահած է, երբ Աստուած է իր ապաւենն ու գործութիւնը, կ'ունենայ ներքին խաղաղութիւն մը, եւ աւելի պարաստ ինչ ընելու: Այդ բոլորին մասին երբ Քրիստոս իր կեանքի վերջին հանգրուանին նոյն բաներուն մասին երբ խօսեցաւ իր աշակերտներուն, նպարակ չունենար զիրենք վախցնելու, այլ՝ զիրենք պարաստելու եւ իրենց յոյսը Քրիստոսի վրայ դնելու, երբ նոյն խոստումը պիտի փար ըսելով, ահաւասիկ ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհիս վախճանը:

Ահա այդ աղէտին դիմաց, կը ներկայացնէ գետ մը, որ իր վրակներով կ'ուրախացնէ Աստուծոյ քաղաքը, հոն ուր Աստուած կը բնակի: Ո՛ր է կամ ի՞նչ է այդ քաղաքը: Արիկա ուրիշ բան չէ եթէ ոչ մենք ենք, մեր անձերը, որ իբրեւ քաղաք, մանաւանդ՝ Աստուծոյ քաղաք Աստուած հոն կը բնակի: Ինչպէս պիտի ըսէ Աստուածաշունչը, Աստուած անձեռագործ փաճարներուն, քաղաքներու մէջ կը բնակի: հոն ուր Աստուծոյ ներկայութիւնը կայ հոն նաեւ խաղաղութիւն կայ, ուրախութիւն կայ: Աստուած միայն կրարական ներկայութիւն չէ, այլ՝ ամէն օր կ'օգնէ:

Բնութեան աղէտէն յետոյ կայ նաեւ ազգերու եւ թագաւորութիւններու աղէտը եւ անոնց կործանումը, որուն դիմաց երբ Աստուած որոտայ՝ աշխարհը ամբողջ կը հալի: Եւ այս որոտալը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ դարաստանը, առաւել եւս մեր փեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը, ուր կը կարդանք յայտնութիւն Յովհաննու 19 գլխուն մէջ, երբ Քրիստոս իր բերնի սուրովը, այսինքն իր խօսքովը, ամբողջ աշխարհը պիտի հալեցնէ:

Դարձեալ կը կրկնէ ըսելով, Ամենակալ Տէրը մեզի հետ է: Ինչ անուն փրուեցաւ երբ Յիսուս պիտի ծնէր, Էմմանուէլ, որ կը նշանակէ Տէրը մեզի հետ: Ահաւասիկ այսփեղ ուրեմն կը խօսի նաեւ այն մասին, որ Քրիստոս մեզի հետ է: Մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է: Որ հայրերուն մասին է խօսքը, Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի: Այն հայրերուն, որոնք իրենց ամբողջական յոյսը դրին Ամենակալ Աստուծոյ վրայ, եւ անով առաջնորդուեցան ուր որ ալ գացին: Բայց անոր գալուստը իր հետ պիտի բերէ նախ խաղաղութիւն, բայց միեւնոյն ժամանակ պիտի կոտորէ թշնամիին աղէտը, նիզակը, վահանը:

Ի վերջոյ, կոչ կ'ուղղէ, որ դադրեցնեն կռիւները, եւ ճանչնան ճշմարիտ Աստուածը, որ կ'իշխէ ազգերուն եւ կը փիրէ աշխարհին: Անգամ մը եւս, Ամենակալ Տէրը, մեզի հետ է, մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է: